Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Шір - Шыгырмақ
Ноқ ауылы мектебі
1905

889

891.99
S-52

Б.Т.С

Переплетно-Галантерейная
мастерская
Е. В. Грель-Гриневич
Таможная 4

891.99
Ս-52
№ 8895

Մ. ՏԻՐ-ՄԱՐԴՄԵԱՆ.

ԻՄ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(ԶՈՒԱՐՃԱԼԻ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ)

Արդիւնքը յատկացուած է Նախիջեւանի կոտորածներից վնասուածների օգտին.

1001/6116

ԳԻՆՆՆ Է 20 ԿՈՊ.

ТИФЛИСКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ „Պ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.“
1905

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ Մ. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

22.08.2013

58725

Дозволено Цензурою г. Тифлисъ, 2 Іюля 1905 г.

-6 NOV 2011

Արժանարգահատիւ

ՏԷՐ ՄԿՐՏԻՉ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ

ՍԻՐԵԼԻ՜ ՀՕՐԵՂԲԱՅՐ,

Անչափ ուրախացրիք ինձ, որ հետեւելով ս. Աւետարանի «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» անմահ խօսքերին՝ Ձեր ութսունամեայ զառամեալ հասակի մէջ մերժեցիք հարազատ Սարգիս և Խաչատուր որդւոցդ կրկնակի հրաւէրն ու աղերսը՝ թողնելու Ձեր հօտը և աղէտի բեմից—Հին Նախիջեւանից տեղափոխուելու իրենց մօտ՝ ապահով ապրելու համար:

«Ժողովրդիս արտասուաց արժանի գերեզմանն է այսուհետև ձեր ծնողների ամենաապահով տեղը», ասացիք ու գրեցիք Դուք.—«Ապրեցէք դուք երջանիկ և աղօթեցէք մեզ համար, որ շուտով հասնենք մեր ցանկալի նաւահանգիստը, հանդչինք նրանց մօտ»: Ահա Ձեր խօսքերը:

Այդ հանգամանքը, սիրելի՜ հօրեղբայր, որդիական պարտք դրեց ինձ վրայ սոյն շնչին աշխատութիւնս նուիրել Ձեզ և Ձեր լքեալ ժողովրդին, որի օգտին պիտի վաճառուի նա:

Հոգւոյ առանձին բաւականութեամբ լսեցի, որ ամեն օր հովուական պարտք էք համարում Ձեր բնակարանին կից հինաւուրց գերեզմանատունը մտնել և նրա գրկում ամփոփուած մարտիրոսների ընդհանուր գերեզմանի վրայ «հոգւոց» մրմնջալ:

Լսում եմ, որ ամեն օր «Բարի արարէք ատելեաց ձերոց»-ին հետեւելով՝ երկնամարտ ձեռքերով և արտասուալից աչքերով թողութիւն էք խնդրում Արարչից անլուր աղէտի դարանալաը հեղինակների և ազէտ եղբայրադաւ խուժանի համար՝ ասելով, «Հայր, թո՛ղ դոցա, զի ո՛չ գիտեն զինչ գործեն»:

ՕՐՀՆՈՒԹԵԱՆԴ ՄԻՇՏ ԿԱՐՕՏ ՈՐԴԵԱԿԴ՝

Մ. ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆՑ:

10 Յուլիսի 1905 թ.

Երեւան:

ԻՄ ԱՐԿԱԾՆԵՐԸ

1876 թուի յուլիսի սկզբներին էր։

Աստուած ձեր անցաւորաց հոգին լուսաւորէ՝ իմ մէկ բարեկամ, այժմ հանգուցեալ, Ս. ... Բ. ...-ի հետ Ալէքսանդրապոլից Երևան ենք գալիս՝ Արագածի լանջով, Բաշապարանի վրայով։ Ի՞նչ դժուարութեամբ երկու հազուագիւտ ձի ենք գտել քրէհով՝ իրենց թուրք տէրերի հետ։ Սոքա ձիերին, ձիերն էլ տէրերին ըստ ամենայնի արժանի էին—*Խոտիր գլորուել էր՝ պոռտուկը զոռալ։* Մէկը մէկից քոսոտ, մէկը մէկից նիհար, մէկը միւսից բզկտուած, մէկը միւսից թամբալ ու փսլնքոտ, թէ ձիերը և թէ տէրերը։ Երկու ձիերն էլ Վիկտոր Հիւգոյի «Թշուառներ»-ի չարաճճի Գաւրոշի ասածի պէս՝ կարծես մէկ մէկ տակառ էին կուլ տուել, այնքան որ նրանց կողերը ցամաք կաշիների տակից դուրս էին պրծել, և պարզ համարուում։ Նրանց տէրերն էլ, անշուշտ, եթէ մերկանային, նոյն պատկերը կընծայէին, զանազանութիւնը այն կը լինէր միայն, որ առաջինները չորքոտանի էին, իսկ երկրորդները երկոտանի, նոքա միշտ անվնաս ու խաղաղ՝ իսկ սոքա հարկը պահանջած ժամանակ մի մի ահռելի աւազակ ու գազան։

Հանգուցեալ ընկերս առանց հեռատեսութեան ակամայից պատժել էր թէ իրեն և թէ իր ձիուն։ Բաւական չէր, որ ինքը հաստամարմին մէկն էր՝ այլև ծանրաբեռնել էր իրեն 30—40 տարի իր պատենից յոյս աշխարհ չելած մի երկայն ու կեռ քրդական ծանր թրով, նոյնպիսի մի չախմախի հրացանով, երկու դարաբինա ատուած ասիական հին ատրճանակով, դարափափախի արշինուկիսանոց դաշոյնով, վառօդամանով և այլն ըստ կարգին։ Այն լայնանիստ բրդոտ փափախը, որ նա դրել էր իր գլխին, եթէ կշռէիք, հաւատա կէս փութ դար, վայն եկել տարել էր իր ձիուն։ Լուսահոգուն հարցնող լինէր, թէ այ մարդ, հէնց ամէն փոխ տուած բան կողքից կամ շինքից կը կախեն, որ դու կախ էիր տուել ...։ Հաւատացած եմ, որ եթէ նրան անցեալ դարուց մնացած մի թնդանօթ էլ տային՝ այն էլ քաշ կը տար շինքից, այնքան որ զէնքի սիրահար էր հանգուցեալը և այդ հակառակ իր պաշտօնի ոգուն։ Երկուսս էլ ուսուցիչ էինք. նա ինչպէս ասացի, չը կայ այժմ, իսկ ես այդ պաշտօնի մէջ ապրում եմ տակաւին՝ յամառութեամբ և ակնկառոյց սպասելով՝ թէ երբ արդեօք կենսաթոշակս պիտի ստանամ—վռնդուեմ հայ դպրոցների շէմքից, երևի 2 տարի յետոյ, ըստ որում ծառայութեանս 33 տարին նոր է լրանում և ռոճկիս քանակութիւնն էլ հասել է ուղտի պոչի քորին։ Բայց թողնենք այս։ Գանք տարաբաղդ ընկերոջս աւելի ևս տարաբաղդ ձիուն։ Այս խեղճը,

ընթերցող, հէնց որ աչքը ձգեց իր վրայ նոտողին՝ սկսեց գլուխը տանել—բերել և լուռ ու մունջ թափել աչքերից, քաշելիք տանջանքը և բեռի ծանրութիւնը աչքի առաջն առաւ կարծես։ Լեզու ունենար՝ պիտի անշուշտ նա ասէր, այ օրհնած, մի արի տեսնենք ես ինձ շատ եմ կարողանալու տանել, որ քեզ էլ քո զէնքերով ու թաշախուստով տանեմ։ Խեղճի մեղքը հանգուցեալի վիզը. ճար չունէր, անլեզու հայվան էր, ակամայ պէտք է հնազանդէր իր վիճակին։ Եթէ ներկայ քսաներորդ լուսաւոր դարում լեզու ունեցող երկոտանի բանական արարածները մեր աչքի առաջ անլեզու հայվանների նման ծեծւում, մորթւում, կոտորւում, թալանւում, և քարուքանդ են լինում ու դարձեալ հնազանդւում իրենց վիճակին, ուր կը մնային մեր անլեզու չորքոտանիները՝ անցեալ տգէտ ու խաւար 19-րդ դարում։ Բայց պատմութեանս թելը չը կորցնենք ... ինչ ինձ էր վերաբերում՝ յոյսս դրած ընկերոջս քաջութեան վրայ՝ ոչ մի զէնք, անգամ դանակ կամ ասեղ չէի վերցրել, վերցրած էլ լինէի, խոստովանք պահէք՝ գործածելը չը գիտէի, որի համար, ընթերցող, մանաւանդ այժմ, շատ եմ ամաչում։ Ուղիղն ասեմ, ուզում էի մի հրացան էլ ես վեցնեմ և ունէի էլ տանը, բայց անմոռաց բարեկամներիցս մէկը Ս. ... Բ. ...եանը, որ այժմ նոյնպէս հանգուցեալ է, քաջութիւնս և անվեհերութիւնս գիտնալով՝ զգուշացրեց ու ասաց. «Եթէ հրացանդ վերցնելու ես՝ խնայողութեամբ գործ դիր ու

գնդակ քիչ առ հետդ, որ քիչ մարդ սպանես. յուլիս ամիսն է, Երևանում կրակ է թափում, սպանածներդ մեղք կը լինեն, ճանապարհին ընկած կը հոտին և մարդ չի գտնուիլ, որ ժամանակին թաղի»։ Մտադրութիւնս թողի ... այն օրից սկսած՝ հրացանիս դեռ ձեռք չեմ տուել և այդ դէպքից 11 տարի յետոյ Ալէքսանդրապօլից պաշտօնով Երևան փոխադրուելիս՝ մաֆրաշիս մէջ կապած եմ բերել, ու, փառք Աստուծոյ, մինչև այսօր դեռ ոչ մի փորձանքի չեմ հանդիպել, թէև շատ անգամ եմ այս ու այն կողմ ճանապարհորդել։ Թէ ինչ օրի է նա այժմ՝ տակաւին չը գիտեմ, որքան ժանգ է բռնել՝ նոյնպէս տեղեակ չեմ, թէև գիտեմ, որ տանը պէտք է լինի և հանգիստ կերպով մի տեղ պարկած ու քնած՝ ցգալուստն Քրիստոսի։ Դարձեալ իմ ճանապարհորդակից ընկերն է միտքս գալիս։ Լուսահոգին թէ այն ժամանակ և թէ այժմ յիշեցնում է ինձ այն լօպպազ—պարծենկոտ թիֆլիսցիք, որոնք ճանապարհորդելիս զէնք չեն թողնում, որ վրանները չը կախեն - զարդարուելու համար։ Շատ անգամ է պատահել, որ այդպիսիները ճանապարհին հանդիպել են մի անզէն թուրքի կամ քրդի լամուկի և դեռ «ասիտաան դիռշ»-ը չը լսած՝ սարսափահար իրանք իրանց մերկացել են զէնքից և կամովին զէնքը յանձնել նրա ձեռքը։ Իմ ընկերն էլ նրանցից մէկն էր, թէև ինձ մօտ յոխորտում և Քեռօղլի էր ձևանում.—մենք ամենքս, կարծեմ, շատ սակաւ բացառութեամբ, մի սանրի

կտաւ ենք—այդպիսի քաջերից ենք և իսկական Քեռօղլի ենք դառնում մեր կանանց առաջ՝ մեր սենեակների չորս պատերում, առանց մտածելու, որ այժմ կեղծ քեռօղլիութիւնը իսկի ձեռք չի տայ, թէ չէ գլխիդ կը նստեն և դեռ այդ բաւական չի՝ սեպհական տանիցդ էլ դուրս կանեն ու չօլէ չօլ կը դցեն ... այ, թէ որտեղ է սաղում մեր անմահ պապերի առածը թէ՝ «*կռաժ քեզ սատեմ՝ այ կռաշայ դոն խնացիլ*»։ Ինչևիցէ ... խաչն իմն էր, զօրութիւնը ես գիտէի, անշնորհք զինակից ընկերս թէև վերջը զէնքից էլի չուզեց ձեռք քաշել և նիւթական զէնքը հոգևորի վերածեց—քահանայ ձեռնադրուեցաւ և այդ կոչման մէջ էլ հանդեաւ ի Տէր, սակայն այդ պաշտօնումն էլ նա ... բայց «*ամէնեցնալների համար կամ շատ կամ ոչինչ*», ասում է առածը, ուստի այդ մասին իմ կողմից վերջակէտ, մանաւանդ որ ճանապարհ ունենք գնալու։

Ունեցած չունեցածս փոքրիկ խուրջինս էր, որ ձիուս գաւակին կապելով՝ հեծայ։ Նա իւր մէջքի հորիզոնական դրութիւնը հաստատ չը փոխեց. բեռը թեթև էր։ Ի դէպ, ով է տեսել հաստատփոր ու զեր հայ ուսուցիչ, կարծեմ ոչ ոք։ Նոքա բոլորն էլ յայտնի են իրենց տառեխանման, փորը մէջքին կպած նիհար կազմուածքով, որ սննդուում է ամեն օր ամենաշատը մի տեսակ տաք կերակրով և այն՝ ճաշից ճաշ անպատճառ։ Այդ բաղդաւորներից մէկն էլ ես էի, եմ և կամ մինչև այսօր, ուստի զարմանալի չէ, որ

ինձպէսները միշտ ամենահաճելի և ձեռնտու բեռն համարուեն նկարագրածս ծոյլ ու նիհար մի ձիու համար։ Բայց որ իմանաք, թէ ընկերոջս ձիու դրութիւնն ինչ էր նրա հեծնելուց յետոյ՝ Աստուած թշնամուս ցոյց չը տայ։ Նստելուն պէս խեղճ անասունը իսկոյն երկու երեք օրեայ լուսին դարձաւ և գլուխն ու ագին ճիշդ այդ լուսնի եղջիւրները ձևացրին։ Ալէքսանդրապոլ քաղաքում այն ժամանակ, ինչպէս և այժմ, կենդանիների ապահովութեան ընկերութիւն չը լինելով՝ ընկերս էլ թէև անտուգանք մնաց ու չը պատժուեց, բայց յետոյ, ինչպէս կը տեսնենք՝ ձիու խելքը մարդկային խելքին գերազանցեց, չը նայելով, որ մարդը բանական, իսկ ձին անբան արարած է կոչւում։ Մի կերպ քաղաքից դուրս եկանք ու ճանապարհ ընկանք. մի վերստ հազիւ գնացած՝ երկու ձին էլ իրենց չնորհքը ցոյց տուին։ Ես, որ կեանքիս մէջ ձիով առաջին անգամն էի ճանապարհորդում՝ զգացի, որ մինչև տեղ հասնելս ինձ տեսնողը ձիուս պէտք է մոռանայ. ընկերս էլ, թէև ձիով շատ էր տեղ գնացել, բայց նա էլ անպատճառ իր ձիու օրն էր ընկնելու։ Երկուսն էլ կարծես խօսք մէկ արած ուխտել էին մեզ չարչարել. նրանց ընթացքը ձիու ընթացք չէր բոլորովին, մնում էր մեզ ուղտի ընթացքին փառք տալ։ Եթէ սխալմամբ մի թեթև մտրակում էինք՝ մահը աչքներիս առաջն էր գալիս ու գնում, այնքան որ անպիտանները հարում, զրխկացնում էին մեզ մեխերով կարկատած իրենց կոշտ թամբերին։

Էլ ուրիշ ճար չկար, պէտք էր իրենց կամքին թողնել, ինչպէս ուզում էին՝ թող գնային, այնպէս էլ արինք.—երկուսս էլ մտրակներս կապեցինք մէջքներիս, որ նրանց աչքներին չերևին, թէ չէ ահից էլի կսկսին իրենց ուղտութիւնը։ Հազիւ 5—6 վերստ էինք գնացել, որ ընկերոջս ձին գայթեց և քիչ մնաց ներքև գլորէր նրան, ինչ հալով էլի դրստուեց ու մի քանի քայլ փոխելուց յետոյ կանգ առաւ։ Իմ ձիուս էլ մի մահանայ էր հարկաւոր. կանգ առաւ և նա. չար օրինակը աւելի վարակիչ է՝ քան բարի օրինակը։ Աշակերտներից մէկը եթէ դասարանում օրինակ մի յիմար բան է անում՝ մէկ էլ տեսնում ես բոլոր ընկերները նրա վատ օրինակից վարակուեցին կապիկների նման. ով այժմ ուսուցիչ է կամ երբ և իցէ եղել է՝ նա տեսած և զգացած կը լինի։ Հեռու ուր եմ գնում. մոտիկ անցեալից խօսենք։ Յիմար Բագուն եղբայրասպան կոտորած սկսեց և նորա օրինակին հետևեցին իսկոյն մեր համշարիները Երևանում, Նախիջևանում և նոցա շրջապատ գիւղերում, որ հրդեհի պէս բորբոքուելով՝ դեռ չէ հանգել, մեր քօռ բաղդից էլ մեր հրդեհաշէջ խմբի անդամները այնքան քիչ են, որ անզօր են հանգցնել, բայց ինչ ենք ասում, շատ տեղերում իսկի չը կան էլ, իսկ եթէ լինեն՝ որ մէկ տեղին հասնեն։—Ի՞նչ անենք, ընկեր, ասացի ուղեկցիս, իմ ձին էլ կանգնեց։ Մտածելով, որ երկուսն էլ Երևանցի լինելով էշ շատ տեսած կը լինեն՝ սկսեցի այդ երկարականջներին հասկանալի լեզուով

փաղաքշել նրան. «հրը՜, երի՜ ... դուրբան երի՜ ...», բայց այդ էլ չօգնեց, ոչ մի քայլ առաջ չը փոխեց անիրաւը,—Ի՞նչ երի-երիների վախտ ես դտել, օրհնած, մտրակս հանում եմ, ասաց ընկերս։—Բայց տես, գուցէ յետինը չար լինի՝ քան առաջինը։—Ինչ ուզում է՝ թող լինի, ասաց բարկացած ընկերս ու մի թունդ շեպեց իր քեահլանին, սա ամբողջ մարմնով դողաց միայն, բայց չը շարժուեց։ Չրրը՜պպպ, լսուեց երկրորդ և երրորդ հարուածը փափուկ տեղերին, քեահլանն սկսեց ալեկոծեալ նաւակի պէս օրօրուել—առաջի և յետևի ոտների վրայ փոխ առ փոխ ծառս լինել։ Փակագծում ասենք, որ հանգուցեալ մանկավարժ ընկերս ծեծելու գործողութեան մէջ խիստ հետևողականութիւն էր պաշտպանում։ Նա արդարև դպրոցում ծեծի կուսակից էր, որ չէր ծածկում ոչ ոքից, ինչպէս չը ծածկեց նաև Թիֆլիսում 1882 թուին դումարուած հայոց առաջին ուսուցչական ժողովում։ Նա ուրիշներից տարբերւում էր նորանով, որ քարոզում էր ծեծել անպատճառ *փսիխոկ տեղերին*։ Հէնց այդ էր պատճառը, որ ձիուն էլ ծեծելիս այդ մանկավարժական սկզբունքը գործադրումէր նրա փափուկ տեղերի վերայ։ Չրրը՜պպ, հետևեց չորրորդ ուժգին հարուածը, քեահլանը սկսեց քացի տալ, հինգերորդ հարուածից յետոյ նա աքացում էր արդէն ներքև գլորուած նստողին—սպառազինուած ընկերոջս։—Բարաքեալա, բարաքեալա, քեահլան, ասացի ես ու սկսեցի հռհռալ.—Հօ՜ռ ...

լսուեց ընկերոջս բարկացած ձայնը, որ արդէն վեր էր կացել և թոզի մէջ կորած շորերն ու զէնքերն էր թափ տալիս։ Նրա չօռը աւելի ևս ծիծաղս բորբորեց. նա կատաղեց ու մտրակի մի ուժգին հարուած՝ իմ ձիու կողքին, հերթն եկաւ նրան. առաջին արարուած՝ առաջին տեսիլ—սա էլ դողաց. հարուածը կրկնուեց երկրորդ և երրորդ անգամ.—արարուած երկրորդ—օրօրուեց ու ծառս եղաւ, չորրորդ հարուածից յետոյ աքացեն սկսեց, հինգերորդից յետոյ գետնից վերկացած շորերս թափ տալիս՝ ընկերոջս ծիծաղն ընկաւ ականջիս։ Փոխս իսկոյն յետ տուեց։ Այսպիսի թէ տեսքով և թէ արարքով իրար ըստ ամենայնի նման ու համաձայն ձիեր կեանքումս չէի տեսել, մի կուսակցութեան ձիեր լինէին կարծես և աւելի քան մի կուսակցութեան, այնքան որ իրար բերան էին թքել իրանց կատարեալ համերաշխութեամբ։ Մեր ուղեցոյց ձիապաններն էլ, որ իրենց շորբոտանիների կուսակցութեան էին պատկանում՝ խօսք մէկ արած, իրանց ապրանքի յատկութիւնը քաջ գիտնալով՝ մեզ թողել, շատ առաջ էին անցել և չէին երևում։ Ինձ թւում է դիտմամբ էին առաջ ընկել, որ մեր վեր ընկնելիս թէ իրանք և թէ մենք իրարից չամաչենք, և յիրաւի, այն մնաց միայն մեզ մխիթարութիւն, որ մեր վայր ընկնելը ոչ ոք չը տեսաւ։ Երկուսս էլ ձիերի փորերի տակն ընկած թամբերը մի կերպ ուղղեցինք, բայց վայ այն ուղղելուն, փորքաշների վրայ էլ հալ չէր

մնացել, թել ու շուանով իրար հասցրած կաշի-
ների ծայրերը արձակուել, պրծել էին. նոյն կերպ
էլ մենք կարկատեցինք։—Հը՞, նստում ես, թէ չէ,
ասաց ընկերս։—Գլուխս քարն եմ տուել։—Ես պի-
տի նստեմ և սրա կամակորութեան հախիցը գամ,
ասաց՝ ու փորձեց նստել։—Ոտքը ասպանդակին
մօտեցնելը տեսաւ. քահլանն սկսեց իր նախ-
կին խազը յետևի ոտներով. ընկերս մտրակեց.
յետևի ոտներին ընկերացան և առաջի ոտները։
Ներկայացումը նորից պիտի սկսէր, եթէ ես չը
համոզէի նրան թողնել իր անօգուտ փորձը։—
Բաս ինչ անենք, հարցրեց նա։—Ի՞նչ պիտի ա-
նենք, հերթով է, ասացի. մինչև 5 վերստ տեղ
էլ մենք իրանց չը տանենք՝ էլ մեզ չեն թողնե-
լու, որ նստենք.—ուզենք չուզենք՝ այդքան տեղ
էլ մենք պէտք է իրանց շալակենք։ Էլ ճար չը
կար, սանձերն առանք ձեռներս ու սկսեցինք
քարշ տալ։ «Կը կանգնէք կոռտեր», երևի ասացին
նրանք իրենց մտքում և դանդաղաքայլ հետևեցին
մեզ։ «ԱմՁարը կերել է բաՁՁարը», մտածեցինք
մենք ու առաջ ընկանք, որ հասնենք մեր հրե-
ղէնների տէրերին։ Գնա՛, թէ պիտի հասնես, կար-
ծում էինք, թէ առաջին իսկ գիւղում, Թափա-
գօլլակում կը տեսնենք նրանց. ինչ հալով գիւղ
հասանք և իմացանք, որ առաջ են ընկել։ Ճիշտն
ասեմ, ինձ այնքան չէր յոգնեցնում ոտքով գնա-
լը, որքան ընկերս էր նեղւում, որ կորացել,
ըրտնել էր իր ժանգոտ զէնքերի ծանրութեան
տակ։

Էդ անիծածները գոնէ մօտ լինէին, զէնքերս
իրանց տայի, շուտ շուտ կրկնում էր նա։
Ես դիտմամբ ձայն չէի հանում։
—Էս ինչ յիմարութիւն էր տո՞, ասում էր
նա։
Ես լռում էի։
—Հաւատա 4 փութ ծանրութիւն լինի
վրէս ա՛յ։
Ոչ մի խօսք իմ կողմից։
—Ասա զէնքն ո՞վ, դու ո՞վ, ախը է, որ նառ
ուղտի պէս շնչիցդ ու կողքերիցդ քաշ ես տուել,
մեծ բանի վրայ ես էլի։
Սուս եմ կացել։
—Դէ քաշի՛, ջանդ դուրս գայ։
Թէ դուք խօսել էք՝ ես էլ եմ խօսել։
—Առ էս հրացանն էլ քո ուսը գցիր, ա՛յ
տնաքանդ, մի քիչ թեթևանամ, ախը ես մեռայ է։
Համբացել եմ։
—Տօ մի ձէն հանիր է, ինչ ես պապան-
ձուել։
Ինձ հետ ես։
—Ա՛յ չօռ ու ցաւ քեզ հա, բաս ո՞ւմ հետ
եմ։ Ա՛ռ էս հրացանը։
Զէ, աղբէր, ես ինձ հազիւ եմ քաշ տալի։
Արի բառնանք ձիերին, մեզ չեն ուզում տանել՝
գոնէ զէնքերը տանեն։
—Էդ էլ ես լաւ ասում, ասաց ընկերս ու
սկսեց մերկանալ զէնքերից։ Բանից դուրս եկաւ,
որ մեր ձիերը թէև առաջ ձայն չը հանեցին և

թողին որ բառնանք, բայց յետոյ նոյն կամակորութիւնը ձեռք առան, այնքան գժութիւն արին, որ ստիպուեցանք զէնքերից մերկացնել նրանց։ Մի պտտանի ելքի վրայ էինք, որ անցնելով՝ տեսանք ձիապաններին նստած, քաղցը քաղցը խօսելիս ու չիբուխները փստացնելիս։ Ցեսնելուն պէս քրտնակոլոլ քաջարի ընկերոջս կատաղութիւնը բռնեց, մտրակը քաշելը, հասնելն ու թրբխկացնելը մէկ արաւ։ Թուրքի փափախն ընկաւ ու շշմեց։ Երկուսն էլ վեր թռան տեղերից։

—Հառամզադա, բու նա՞ օյին գեալդի ախը է, ասաց նա, (երկուսս էլ թուրքերէնից շատ բոբիկ էինք)։

—Նիա՞ վուրբրսան աղա, նա՞ օյին դէյիրսան ախը ...

Բաս մեր վերընկնելը օյին դայիլ՝ նա՞ վար, ասացի ես։

Ընկերոջս մտրակը իր գործն էր տեսնում— իջնում, բարձրանում էր մերթ մէկի՝ մերթ միւսի գլխին, երեսին ու կողքին։ Այս անգամ իրրև բացառութիւն՝ կոշտ տեղերն էլ փափուկ տեղերի հետ խառնուեցին։

—Ամա՞ն, օղիում, աղա, օղիում, Ալլահա բախ։

—Օղիում էլ՝ հալա սատկի էլ, քիչ էր մնում նահատակուէի, անիծած։ Մտրակի շրբրպպոցը չի կտրում։

—Բէլա հայվան էշշակ աթ կը լինի ախ՞ր...

—Աթ դա էշշակ օլու աղա՞, էշշակ դայիլ՝ ամա բիրազ նախօշ դը։

Սասն բեաս, հայվան. որ աթ դիր՝ նիա՞ բու քրտինքս ծլծլում է, հը՞։ Դարձեալ մի մտրակի հարուած։

—Բաւական է, բաւական, համոզեցի ընկերիս, ծեծելով բան չի դառնայ։

—Ախր նա՞ օլմըշ, նիա՞ վուրբրսընդ բրզա, օղրբրմասընդ քի, կուրբան օլըմ սրզա, աղաչում են թուրքերը մէկը միւսի յետևից։

—Գէթ, քօփօղլի օղլի քօփօղլի ... մի վերջին հարուած էլ և ընկերոջս բարկութիւնն իջաւ, ձիու քէնը իր տիրոջ գլխից, քիթի ու պռունկից ու կողերից հանեց, պրծաւ։

—Ախր մեան դա՝ եօղդաշըմ դա աթ զբրբխկ էյլադի, քիչ մնաց կողքս ջարդուի, ձեր հէրն ան... վերջապէս հանգստացաւ ընկերս։ Թուրքերը մտրակի դաղած տեղերն են դեռ քորում։

—Հը՞... առաջ գեղմրսան ... դէ քորէք, որ սաղանայ, ասացի ես։

—Բեաս դը, օթրրն գեղեաք, աղա, օթրրրն, ասաց իմ ձիապանը, որ աւելի քիչ էր քօթակ կերել, քան ընկերը։

—Բաս չէ ու օթուր չենք անի, ոտքով կերթանք.քո հօրն ողորմի, ասաց ընկերս և իր ձիու սանձը տիրոջ ձեռքը տուաւ, որին հետևեցի և ես. էլ չը թողինք, որ նրանք մեզնից հեռանան կամ սանձերը բաց թողնեն։ Գնում ենք՝ բայց Աստուած գնալ համարի. հաշուում ենք, որ այդպէս դանդաղ գնալով հազիւ ուրեմն չորրորդ օրը մենք տեղ հասնենք, մինչդեռ Ալէքսան-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏ ԳՐԱԳԱՐԱՆ
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

դրապոլից Երևան այդ ճանապարհով ամենաշատը 90 վերստ է։ Էլ հնար չը կար, մի անգամ ընկել էինք՝ պէտք տանէինք և մէկ էլ որ՝ այդ օրինակելի ճանապարհորդութիւնն էլ իւր քաղցրութիւնն ունէր, որ միշտ ձեռք չէր ընկնի։ Դարձեալ սկսուեց սովորական ու տանջող կոստկոստոցը ձիերի։ Զգում էի, որ հաղիւ տեղ հասնեմ, ոտներս սկսել էին ընդարմանալ ու ցաւել. հարուած ու քսուած տեղերը կոշտացել և անտանելի ցաւ էին պատճառում։ Երբեմն ստիպւում էի ոտներս հանել ասպանդակներից, որ ծնկներիս անհանդուժելի ցաւի առաջն առնեմ, բայց այն ժամանակ էլ ձիու վեր վեր թռչելիս քիչ էր մնում, որ վայր ընկնեմ։ Մի խօսքով նրա ամեն մի քայլափոխը առանց զգալի ցաւ յառաջացնելու՝ չէր վերջանում ինձ համար։

—Էս ինչ անտանելի ցաւի մէջ ընկայ, մտածում եմ ես, բայց ամօթիցս ընկերոջս ոչինչ չեմ ասում։ Արևը խոնարհում էր դէպի իր մուտքը՝ վերջին ճառագայթները ձգելով սպիտակափառ և երկեղջիւր լայնանիստ Արագածի սեպաժայռ կատարին՝ երբ մենք հասանք նրա լանջում մի քարքարոտ բլրակի տակ հանգչող Հաջիխալիլ հայկական գիւղը։ Որոշեցինք գիշերել այդտեղ և առաւօտեան կանուխ ճանապարհ ընկնել։ Գիւղը հասնելուն պէս իջեցինք գիւղեղրում գտնուած մի տան մէջ, իսկ թուրքերը իրենց ձիերի հետ նոյն տան ախոռում։ Ձիուց իջնելս տեսայ, ինչպէս մի զունտ միս՝ համարեա չեմ կարողանում

շարժուել տեղից, մի կերպ ինձ ձգեցի տուն և ընկայ օդայի օջախի կողքերում եղած սաքուի—երկու տախտաձև օթոցներից մէկի վրայ։—Հը՞, ինչ է եղել քեզ, հարցրեց ընկերս։—Ոչինչ, պատասխանեցի ես, յոգնել եմ։ Թէյ խմելուց յետոյ ընկերս Մորֆէոսի գիրկն ընկաւ ու խռմփոցը խառնեց օդային կիսդոմի մէջ եղող եզների, կովերի, գոմէշների և հորթերի փռնչոցին, իսկ ես նաւթի ճրագի մրարձակ աղօտ լոյսի տակ սկսեցի իմ ճաքը տեսնել։ Գոտկատեղիցս ներքև էլ սաղ տեղ չէր թողել անիրաւ ձին։ Ինչ տեղս որ թամբին էր դիպել կամ ուրիշ մասերին՝ կարմրել ու կոշտացել էր, ձեռք տալ չէր լինում. այնքան որ՝ անտանելի կերպով ցաւում էր. պէտք էր ցաւի առաջն առնելու համար մի հնար մտածել։ Ուզեցի այդ կարմրած ու կոշտացած տեղերը շորի կտորներով կապել կապկպել, որ հետևեալ օրը չը քսուին դարձեալ և ցաւ պատճառեն։ Շորի կտոր և թել էր հարկաւոր։ Թաշկինակս կտոր կտոր արի, չը բաւականացաւ, ստիպուեցի ներքնաշապկիս առաջի փէշը կտրել և նոյնպէս մաս մաս անել։ Թել էր հարկաւոր, իսկ հիւրընկալ տնեցիք քնած էին։ Էլ ճար չը կար. կարիքը հնարագէտ է, ասացի ու ոտներիցս բամբակեայ զուլպիս մէկը հանելով՝ սկսեցի ճակից քանդել։ Կապկպեցի բոլոր ցաւ առած տեղերը ըստ կարգին։ Անցած ժամանակ է, բայց ամենաքիչը ամէն ոտքիս միջին թւով բաժին ընկաւ մինչև 5—6 կարկատան։ Ում կարկատանը շորերի վրայ է լինում և աչքի

ընկնում, իմ կարկատանները ընկան մերկ մարմնիս վրայ և ծածուկ մնացին թէ ընկերոջից և թէ թուրքերից։ Ամօթից ոչ ոքի ոչինչ չասացի և մի կերպ թեք ընկայ քնելու, բայց անիրաւ ցաւը քնել կը թողնէր։ Մինչև լոյս տապակուեցի ցաւից ու համաշխարհային ցուցահանդէսի գորդ լինելու արժանի գազան լուերից։ Լուսարացին հէնց նոր էր աչքս կպել՝ որ ընկերոջս ձայնն ընկաւ ականջիս, թէ՝ «ժամանակ է գնալու, վեր կաց»։ Դարձեալ ոչինչ չասացի ու ամօթից ակամայ վեր կացայ տեղից. փոքր ինչ լաւ էի զգում ինձ և առաջուան սաստիկ ցաւից թեթևացած։ Քնաթաթախ թուրքերը նժոյգներս առաջ բերին և տեսնելուն պէս երեկուան տանջանքներս աչքիս առաջ պատկերացան։ Ճար չը կար. պէտք է նստէինք ու նստանք, հազիւ 2—3 վերստ էինք գնացել՝ որ նորոգուեցին նախկին կսկիծն ու ցաւերը տուլի ես ուժգին կերպով։ Ինչ անելիս չը գիտէի և երբ մտածում էի, թէ ամբողջ օրը պէտք է նոյն ցաւերով տանջուեմ՝ յուսահատւում էի և զգում, որ ես դիմացողը չեմ։ Մի քանի վերստ էլ ատամ ատամի տալով ինձ զսպեցի թէև, բայց այնուհետև համբերութեանս բաժակը լցուեց և ոտներիս ցաւը պատճառ բռնելով՝ իջայ ձիուց ու սկսեցի կամաց կամաց քայլել։ Սկզբում ոտքերս հազիւ էին շարժւում, բայց քանի գնաց՝ բացուեցին և դիւրացրին ընթացքս, այնպէս որ հարիւրապատիկ աւելի զոհ էի ոտքով՝ քան ձիով գնալուս։—Այ տղայ, նստիր, հէ-

ռիք ոտքով գաս, յոգնեցիր ախը, ասաց ընկերս։ Հոգ չէ, այսպէս լաւ է, պատասխանեցի ես և շարունակեցի։ Ուղիղ որ յոգնել էի, բայց ճար չունէի, նստելը որ միտքս էր գալիս՝ ամբողջ մարմինս սարսուռ էր պատում, սակայն ոտքով երկար մանդալն էլ վերջ ի վերջոյ էն օրը դցեց ինձ, որ այլևս բայլերս չէին հնազանդում։ 10—15 վերստ գնացած կը լինէինք, որ ընկերս էլ յոգնեց, իջաւ ձիուց և երկուսս էլ փառաւորապէս ձգուեցինք կանաչազարդ դաշտի խոտերի վրայ մի կտոր հաց ուտելու։ Ձիապանները մեզնից քիչ հեռու իրենց պաշարի աղլուխներն արձակեցին, մենք մեր խուրջինները, իսկ ձիերը իրենց բեռանները մօտեցրին կանաչ մարգագետնին։

Մօտ երկու ժամ հանգստանալուց յետոյ հեծանք և ինչ տանջանքներով երեկոյեան, էլ չեմ ասում հասանք, այլ մեզ զցեցինք Ղարաբիլիսա անուն գիւղը՝ համարեա կիսամեռ։ Ոտքերիս ուռոյցները մէկին մէկ կրկնապատկուել էին, շապկիս յետեի փէշն էլ պէտք եկաւ և գուլպիս ճիտքը ամբողջովին քանդուեց, մնաց միայն թաթի վերջին ծայրը։ Հետևեալ օրը ճանապարհի $^2/_3$ մասը քայլեցի, բայց վերքերս չը լաւացան։ Աշտարակից խոտորեցինք ճանապարհը դէպի ընկերոջս անները գիւղը Քեօթակլու՝ որ Բիւրականի վերևն է գտնուում, Արագածի ձիւնասահմանին համարեա կպած։ Այդ գիւղում, նախ քան Երևան գնալը մի քանի օր հիւր էինք մնա-

լու։ Այդքան ճանապարհը գալուց յետոյ քիչ էր մնում ցաւեմ, որ ոչ մի դէպք չեղաւ ընկերոջս քաջասրտութիւնը ի մօտոյ տեսնելու, որով նա յաճախ պարծենում էր ու յոխորտում. բայց փառք Աստուծոյ, կարօտ չը մնացի, այդ էլ տեսայ։ Այդ մտածման մէջ էի և նոր էի ձիս նստել, որ յանկարծ լսուեց իմ ձիապանիս ահաբեկուած և ուժգին ձայնը՝ «իլան ... աղա ... իլան ... կաչն»։ (Օձն աղա, օձը, փախէք)։ Իլան մի ասա, մի գազան, որ շեշտակի դէմ հանդիման կարծես մեր վրայ էր գալիս՝ գայարուելով։ Ընկերոջս «փսխիր» գոռոցը և մտրակի ուժգին հարուածը լսեցի միայն և աչքս բանալով՝ ինձ գետնին գտայ. 15 – 20 քայլ՝ ինձնից հեռու դէպի առաջ՝ առանց ամաչելու պարկել էր նոյնպէս սպառազինուած ընկերս իր քոսոտ ձիու հետ։ Անիրաւ իլանը չը կար, փախել էր։

—Հը՞, քէֆդ ոնց է Քեօռօղլի, ասացի ես վեր ընկածս տեղից։

—Սուս կաց, որ հրացանիս վրայ եմ ընկել, կողքս կարծես ջարդուել է։

—Լաւ է չի բացուել։

—Գնդակ կայ մէջը, որ բացուի, և մի վայ արձակեց։

—Հը՞, տեղ մեղդ հօ չի՞ ցաւում կամ վնասուել հօ չի։

—Վնասուելը չը գիտեմ, բայց շատ է ցաւում։

—Եաղըխ, եաղըխ, գլուխները կեղծաւորա-

բար թափ տալով ասում են թուրքերը, բայց նկատում եմ, քթերի տակ ծիծաղում են անիրաւները.—Ակն ընդ ական միտքս եկաւ։ Լաւ որ անվնաս էր անցել երկուսիս էլ վէր ընկնելը։

—Է՞հ, Աստուած երբորդ փորձանքից ազատի, ասացի ու վերկացայ. վերկացաւ և նա. ձիերն առաջ քաշեցին, բայց մինչև Քեօթակլու չը հեծանք երկուսս էլ։ Նախ քան գիւղը հասնելը լուսահոգին ինձնից խօսք առաւ աներոջը ոչինչ չասել։ Նորափեսայ էր, ամաչում էր։ Խօսքս պահեցի թէև, բայց ինչպէս յետոյ ընթերցողը կը տեսնի՝ փոշմանեցի։

Հորս թէ հինգ օր, միտքս չէ, մնացինք Դ , . Զ ...-իչի, ընկերոջս աներոջ մօտ, որ Երևանի ամարային կիզիչ և խեղդուկ օդից փախչելով՝ ապաւինել էր իւր սեպհական ամարանոցում —այդ հրաշագեղ վայրում, որ ինչպէս ծիծեռնակի ապահով ու անդորը բոյն՝ պինդ կպել էր Արագածի հովասուն և անմահական ջրերով ցօղուած լանջին։ Մի գողտրիկ ու հաճոյատեսիլ օազիս էր Դ... Զ...-իչի ամարանոցը ժայռերի վրայ արհեստական կերպով բուսցրած, աճեցրած իր նախշուն պարտիզով—գործ վաստակաւոր ձեռքերի, որոնք չը նայելով իրենց տիրոջ պատկառելի հասակին՝ դեռ չէին յոգնել և գործում էին անդադար՝ կարծես թերահաւատներին ապացուցանելու համար, թէ անդուլ աշխատանքի

առաջ ոչ միայն բարեբեր հողը, այլ և լերկ ու կոպիտ ժայռերն անգամ ծլում են ու ծաղկում։ Այդ զողտրիկ վայրից ահա, ինչպէս յստակ ու ջինջ հայելու մէջ, պարզ երևում էր Արարատեան ընդարձակածաւալ դաշտը իւր անթիւ ու կանաչազարդ ցաք ու ցրիւ թուրք ու հայ գիւղերով։ Պատմական Արաքսը, որ օձապտոյտ, որպէս մի անսկիզբն ու անվերջ արծաթեայ գօտի դալարում—ձգւում էր իւր հին ու պատկառելի լերան —վեհապանծ մեծ ու փոքր Մասեաց ստորոտով՝ ընդ առաջ էր սողում մոլեգին՝ անցած գնացածների ուրախ ու տխուր յիշատակները նորոգելով սրտիդ մէջ։ Այդ հիասքանչ տեսարանին լուռ վկայ էր նաև Հայաստանեայց եկեղեցիների մայր թագուհի Ս. Էջմիածինը, իւր հարազատ քոյրերով—Ս. Գայիանէի, Ղողակաթի և Հռիփսիմէի վանքերով։ Մի փոքր ներքև Բիւրականը իւր երկյարկ հայրապետանոցով, որի մէջ եկել, հանգըստանում էր անմոռանալի ուսումնասէր ու դպրոցասէր Տէր Գէորգ Դ. կաթուղիկոը, որի յաւերժական և անջինջ յիշատակը թող անմոռաց լինի դարէ դար՝ ամեն մի հայի սրտից։

Բանաստեղծական աւիւնս սանձել չը կարողանալու երկիւղից՝ դառնանք մեր հիւրընկալին, ընկերոջս աներ Դ... Զ...-իչին։

Հանգուցեալից շատ բան միտքս չէ, լաւ յիշում եմ նրա սրածայր սեամորթ փափախը, որի երկայնութիւնը եթէ քառապատկես՝ կստանաս նրա կարճ հասակը, աւելացրու դրա վրայ

և իւր երկայն թևերով կարան՝ որ ստանաս ճիշտ Սունդուկեանի Պէպոյի Գիքոն։ Եթէ, ընթերցող, հանգուցեալ Գէորգ Միրզեանին—հայ թատրոնի զարդ. այդ աննման կոմիկին Գիքոյի դերում տեսել ես՝ էլ Դ... Զ...-իչին նկարագրելս իզուր կը լինի։ Աւելցնեմ սակայն, որ Դ.... Զ...-իչը իմ տեսած ժամանակ մի գլգլուած ծերունի էր և եթէ ոտքի վրայ կանգնում և ապրում էր տակաւին՝ նա պարտական էր ծերոց գաւազանին—կոնեակին, ռոմին, մանախօռումին, քիշմիշի օղիին և սոցին նման այլ և այլ ըմպելիքներին, որ այնքան առատութեամբ Բաքոս ծերունին բաշխել էր նրան խառն ու անխտիր կուլ տալու՝ ժամանակ և անժամանակ։ Միտքս է նոյնպէս, որ լուսահոգին ծխում էր շատ և անչափ—ծուխը ծխից, ինչպէս ասում են, չէր կտրում, որին զոհ պիտի գնար մի օր՝ եթէ փեսան չը հասնէր։ Պարկած ժամանակն էլ առանց ծխելու չէր մնում։ Մի օր, փառաւոր ճաշից յետոյ, ըստ սովորականին ծխելիս՝ պարկած տեղը քունը տարել և կրակն ընկել էր վերմակի վրայ, որից վերմակը բաւականին տեղ այրուել էր, իսկ նա չէր զգացել և զուցէ չզգար էլ ու այրուէր, եթէ փեսան պատահմամբ վրայ չը հասնէր և չազատէր աներոջն այրուելուց։ Որքան յիշում եմ՝ օրինակելի հայհոյարան էլ էր, որի հայհոյանքներից շրջապատողները աւելի զուարճանում՝ քան նեղանում էին։ Մեր տեսակցութիւնից յետոյ նա կարծեմ երկար չապրեց։ Հորրորդ, թէ հինգերորդ օրն էր, որ

շնորհակալութիւն անելով նրան իր ջերմ հիւրասիրութեան համար՝ մեկնեցինք Երևան, բայց այս անգամ ոչ բիւրականցու, այլ վարձու ձիերով, որոնք իրենց եմէ ոչ տեսքով՝ գոնէ ընթացքի միանման կոպտութեամբ մեր երանելի թուրքերի աւելի քան հրաշալի ձիերն էին յիշեցնում։ 4—5 օրեայ հանգստութիւնը թէև բաւականին կազդուրել էր ոտքերս՝ բայց և այնպէս ցաւը բոլորովին չէր անհետացել. հարուած տեղերն սկսել էին ուռել և *չիրան* դառնալ։ Ահա այդ դրութեամբ ես ձի հեծայ ընկերոջս հետ Երևան գնալու։ Թէ ինչ տանջանքով և դժուարութեամբ հասայ Երևան, անգօր եմ նկարագրել. կասեմ միայն, որ 29 տարի անցնելուց յետոյ դեռ այդ ցաւերի տպաւորութիւնը թարմ է մնացել ուղեղիս մէջ։ Քաղաքին մօտեցած՝ ընկերս իմացաւ, որ ես իջնելու եմ փեսայիս, այժմ հանգուցեալ Գ.... Հ....եանի մօտ և խօսք առաւ հիւրասիրուելու անպատճառ իւր աներորդու տանը։ Թէև շատ աշխատեցի ձեռքից ազատուել և իմ սովորական հիւրավայրում հանգիստ առնել, բայց չը կարողացայ։ Ձրագվառոցից շատ ուշ քաղաք հասնելով՝ իջևանեցինք միասին նրա աներորդու մօտ, որ կենում էր մի քարաշէն վարձու տան մէջ՝ Царская փողոցում և որ այժմ ամեն անգամ մօտովն անցնելիս՝ կարծես լեզու առած յիշեցնում է ինձ ներկայ արկածներս։ Տան տէրը, Վ.... Դ.... Ն...եանը տանը չէր, ամուսինը մեծ հաճութեամբ ու սիրով ընդունեց ինձ՝ որ-

պէս իր փեսայի մտերիմ ընկերոջ և պաշտօնակցին։ Տանտիկինը իսկոյն թէյի պատրաստութիւն տեսաւ։ Նստել եմ թէև, բայց, ինչպէս ասում են՝ քօսը ջանս պատել է. վիրաւոր ոտներս սկսել են այնպէս քոր գալ, որ ամաչում եմ քորել, քրտինքը կոխել է ինձ չափազանց տօթից, աւելցրու դրա վրայ նաև մոծակների մանաւանդ մղմեղ ասուած համարեա անտեսանելի չարաճճիների յայտնի և գաղտնի անդութ խայթոցը, որ ինձ համար անսովոր մի բան էր, այն ժամանակ ամեն ինչ կատարեալ կը լինի։ Առաջին բաժակ թէյը հէնց բերին թէ չէ՝ շարարը ձգելուց յետոյ, էն էր ուզում էի բաժակը վերցնեմ մատուցարանի վրայից՝ մէկ էլ յանկարծ տր՞զզզր՞զզզ ... մի անիրաւ մոծակ մօտեցաւ բաժակին. ուզեցի քշեմ, որ մէջը չընկնի, ձեռքս փոխանակ մոծակին քշելու՝ դիպաւ թէյի զգալին ու բաժակն ամբողջ շուռ եկաւ կէսը մատուցարանի և կէսն ինձ վրայ։ Էդ էր պակաս, ոտներս կիսախաշ եղան, քրտինքն ինձ կոխեց, ամօթից չիմացայ ինչ անեմ։ Թաշկինակիս պատմութիւնն արդէն գիտէր, ոչինչ չը կար ձեռքիս, որ սրբէի այդ հերիք չէր՝ ընկերս սկսեց բարձրաձայն ծիծաղել ու թուլանալ, որ ինձ կատարել շարեցրեց։ «Ոչինչ, ոչինչ» թէև լսուեց բարի տանտիրոջ սիրտ տուող ձայնը, բայց ես իմն առայ, շփոթուեցի և ինձ կորցրի։ Ընկերոջս ծիծաղը դեռ շարունակւում էր, որ երկրորդ բաժակը բերին. նկատեցի, որ անիրաւ ծառան էլ էր քթի տակ ծիծաղում, ե-

ПИСКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

ըևի հէնց նրա համար, որ բաժակը շուռ գալիս՝ տաք թէյից նրա ձեռքերին կամ սրունքներին բաժին չէր հասել։ Էլի լաւ էր, որ նա ազատուել էր, թէ չէ կարող էր պատահել, որ ամբողջ մատուցարանը իր բոլոր բաժակներով վայր ձգէր և խայտառակութիւնը աւելի կատարեալ լինէր։ Ինչքան աչքով ունքով արի ընկերոջս, որ լռի. տէրը չեղաւ, մէկ գլուխ հէնց ծիծաղում էր տնաքանը։ Թէյից յետոյ հիւրասէր տանտիկինը սկըսեց ընթրիքի պատրաստութիւն տեսնել։ Ա՜խ, երանի՜ թէ այդ ընթրիքը չը լինէր ...։ Երկար, շատ երկար սպասեցինք ամուսնուն, բայց նա չեկաւ.—նա կլուբում կը լինի և երևի շատ կուշանայ, ասաց տանտիկինը, մենք նրան չենք սպասի, դուք յոգնած կը լինիք, աւելի լաւ է մենք ընթրենք։ Փեսան համաձայնութիւն տուեց և ընթրիքի սեղանը բացուեցաւ։ Երբ ամեն ինչ պատրաստ էր և տանտիկինը մի գոյգ մոմակալ վառած մոմերով սեղանի վրայ դնելուց յետոյ ուզում էր ինձ մօտ եղած թղթախաղի սեղանի վրայի լամպարն էլ դնել ընթրիքի սեղանին՝ տղամարդութիւնս կամ ինչպէս ասում են՝ կավալերութիւնս բռնեց ու խոնարհ ծառայութիւնս մատուցանել ուզելով՝ ինքս կամեցայ լամպարը վերցնել, որ դնեմ հացի սեղանին։ Ձեռս լամպարին կպչելը տեսայ, չը գիտեմ ինչպէս եղաւ և ինչ կերպ բռնեցի, միայն գիտեմ, որ ամբողջ պատուական լամպարը ձեռքիցս սահեց, գուրս պրծաւ ու չըրը՛խկ, վայր ընկաւ յատակին։ Գեղեցիկ լուս-

ամփոփի փշրանքը ծածկեց յատակը, լամպարը փշուր փշուր եղաւ՝ մեծ կտորը ականջը մնաց, նաւթը բռնկեց ու հրդեհեց յատակը։ Այս անգամ ընկերս ծիծաղը մոռացաւ, ահարեկ ձայնով „пажаръ“ գոչեց ու գուրս փախաւ, տանտիկինը ինչ անելիքը չը գիտցաւ ու սուր ճիչ արձակելով՝ գուրս փախաւ սենեակից, ես թէև սիրտնեցի ու գաճ գառայ համարեա, բայց ուզելով յանցանքս քաւել՝ յատակեցի սեղանի վրայ դրած լիքը ջըշիշը և ամբողջապէս շուռ տուի հրդեհուած տեղի վրայ։ Ունքը շոկելու տեղ՝ աչքն էլ հանեցի հրդեհն աւելի բորբոքուեց ու սաստկացաւ։ Հետևանքից գլուխս կորցրած այն տեսայ միայն, որ ծառան ու փեսան կատաղածի պէս ներս ընկան մի մի կարպետ ձեռներին, որ ձգելով հրդեհի վրայ՝ իսկոյն հանգցրին։ Նաւթի անախորժ հոտով լցուեց սենեակը և երբ վտանգն անցաւ՝ զարձեալ լսուեց ընկերոջս անզուսպ ծիծաղը և տանտիկնոջ «ոչինչ, ոչինչ» յուսադրական խօսքերը։ Ես կատարեալ շշմել էի և ինձ կորցրել, հազիւ ուրեմն համարձակուեցի շշնջալ- «Էլ ինչ ոչինչ, տիկին, խայտառակ բան գուրս եկաւ»։ Բայց եղածն անցած էր, ծառան արդէն գլուխը թօթուելով լուսամփոփի և լամպարի բեկորներն էր աւելում, սրբում։ Ինձ կատարեալ մորթում էր ընկերոջս անհատնում ծիծաղը, որ դեռ երկար շարունակւում էր։ Շատ բաց բերանն էր, ասա ինչ կար ծիծաղելու, դեռ մի բաժակ էր շուռ եկել և մէկ էլ մի լամպար փշրուել։ Բարի տան-

տիկինը այլայլուած դրութիւնս տեսնելով՝ իւր քաղցը խօսքերով կրկին ու կրկին սիրտս առաւ և նստանք ընթրիքի։ Առաջին կերակուրը, ոչինչ, եկաւ ու գնաց առանց միջնադէպրի ու փորձանքի։ Ընկերս առաջարկեց տանտիկնոջ կենացը. ձեռքս մեկնեցի կարմիր գինու շիշին, որ բաժակս լցնեմ, յանկարծ դիպայ մոմակալին, մոմակալը խոնարհուեց, որ վայր ընկնի՝ ուզեցի մոմակալը բռնեմ, բայց չը կարողացայ, նա արդէն դիպել էր շիշին ու ծռել, ուզեցի կարմիր գինու շիշը բռնեմ՝ ձեռքս հասաւ միայն մոմակալին, որ աւելի ուժգին հրեց շիշին, որ շուռ եկաւ ու ձիւնի պէս մաքուր սպիտակ ծովը — սփռոցը կարմիր ծով դարձաւ։ Ընկերոջս էլ էդ էր պակաս, աչքերը խփեց ու ծիծաղի տոպրակի բերանը բաց արաւ ու սկսեց հռհռալ մինչև խեղդուելու աստիճան։ Թէև տանտիկինը քաղաքավարութիւնից էլի յարեց իւր «ոչինչ, ոչինչ»-ը, բայց ինչ իմ հաղն էր՝ Աստուած թշնամուս ցոյց չը տայ, ամօթից գետին մտայ ես։ Աղամաններում էլ աղ չը մնաց, բոլորն էլ թէև տիկինը գինու թափած տեղի վրայ շաղ տուեց, բայց ինչ կուզէր անէր՝ անօգուտ էր, սփռոցը ինձ նման բանից պրծել էր։ Հերթն եկաւ երկրորդ կերակրին։ Ճաշով տապակայ էր գետնախնձորով, որ տանտիկնոջից յետոյ ծառան ինձ մօտեցրեց՝ սկուտղը լի շագանակագոյն իւղալի հիւթով։ Մի կտոր առանց փորձանքի վերցնելուց յետոյ պատառաքաղս ուզեցի խրել սիրածս կարմիր ձուաձեղի պէս կարմրացրած — տապակած գետնախնձորի կտորի մէջ, որ ամանս գնեմ՝ էլ չը գիտեմ ինչպէս եղաւ, ծառայի՝ թէ իմ անշնորհքութիւնից էր՝ սկուտղը նրա ձեռին հաւասարակշռութիւնը կորցրեց (մի ձեռով էր պահել անիրաւը) և իւղալի հիւթն յանկարծ չը՞ռռռ՞ռ դէպի իմ ամանս ու սեղանը. անմասն չը թողեց և շորերս։ «Առ քեզ տրաքրց», մտածեցի ես. թէև դարձեալ «ոչինչ, ոչինչ» կրկնեց տանտիկինը, բայց այս անգամ ինքն էլ փրթկաց — ծիծաղեց, իսկ ընկերս, լուսահոգին... կարծես իսկի չէր ծիծաղել խեղճ ողորմելին, զոգցես մի մահանի էր սպասում... հռհռոցն սկսեց, բայց քիչ էր մնում խեղդուի այս անգամ անկուշտ ծիծաղից։ Բարկութիւնս շատ եկաւ մանաւանդ հէնց այն պատճառով, որ այդ խայտառակութիւնից յետոյ ժամանակ գըտաւ նա դիտմամբ բաժակը բաժակիս խփել և իմ թանկագին կենացը կօնծել կէս խեղդուկ և կէս արձակ ծիծաղով։ Մէկ մտածեցի իլանի-օձի պատմութիւնն անեմ, բայց վրէս հալ չէր մնացել, ամօթի մէջ կորել, թաղուել էի բոլորովին։ Թէ ինչպէս վերջացաւ ընթրիքը՝ չեմ յիշում, յիշում եմ միայն, որ վերկենալուց յետոյ լուցկին վառեցի գլանակս կպցնելու ու սեղանի վրայ մոխրաման չը գտնելով՝ վառ լուցկին բաց լուսամուտից ձգեցի դուրս դէպի հայեաթը։ Երկու բոպէ հաղիւ անցած կը լինէր, մէկ էլ ինչ տեսնենք, թէ սենեակը և թէ դուրսը աննկարագրելի լուսով բոցավառուեց։ Զգածս անիրաւ

լուցկին ընկել էր հայելթում դարսած չոր խոտի դեզի մէջ և իւր շնորհքը ցոյց տուել։ Թէ ծառաները ինչ դժուարութեամբ հանգցրին դեզը՝ աւելորդ եմ համարում յիշել. կասեմ միայն, որ նրանցից մէկի խօսքերը թէ՝ «էս ի՞նչ թարալէն որտեղից եկաւ տо» դեռ չեմ մոռացել, խօսքերը՝ որոնք ուղղուած էին իմ հասցէին։ Ինձ գայրացնում ու նեղում էր միայն ընկերոջս անվերջ ծիծաղը, որ քանի գնում՝ այնքան աւելի իւր դաղաթնակէտին էր հասնում։ Թէև դարձեալ բարի տանտիկինը իւր «ոչինչ, ոչինչ»-ը չը խնայեց ինձնից, բայց այդ ոչինչի մէջ ինձ թւում էր, թէ աւելի դառն ծիծաղ էր թաղնուած։ Խոտի հրդեհից յետոյ հազիւ կէս ժամ անցած՝ կլուբից տուն եկաւ տան տէր Վ... Դ... Ե...-եանը, որ հրաբորբոք համբուրուելով փեսայի հետ, սիրով ընդունեց և ինձ, իւր փեսայի բերած քաղաքավարի հիւրիս։—Հը՞, տարուել ես... հարցրեց տանտիկինը, – Այո՛, 5 ռուբլի, պատասխանեց ամուսինը։ Լեզուս բացուեց.— Ես աւելի շատ եմ տարուել Վ... Դ...-ից, ասացի ես ու իրար յետևից թուեցի՝ մէկ թէյի բաժակ, մէկ լամպար իւր լուսամփոփով, մի շիշ կարմիր գինի, մի սփռոց, մի ման տապակայի չաղանակազոյն հիւթ և մի դեզ խոտ։ Նորեկ տան տէրը գլխի չընկաւ և չը հասկացաւ ի հարկէ, բայց լուսահոգի ընկերոջս բերանում լօրի ենը կը թրջուէր. պարոնը աչքերը խփեց ու բերանը բաց արաւ, ծիծաղից խեղդուելով հազիւ հազ կարողացաւ պատմել գլխիս

եկած արկածները։ Որքան եղաւ իմ զարմանքը, որ աներորդին էլ միացաւ փեսայի հետ, նա էլ բերանը բաց արաւ ու հրռ հա հրռ, հի, հա, հի, հի, հա, հի, հա, խա, խա, խա, խի, խա, խի իր օրինակելի ու արտասովոր բարձր ու անկուշտ ծիծաղով թնդացրեց ամբողջ սենեակը, աւելացրէք դրա վրայ և այն, որ վերջումն էլ ցաւ յայտնեց, որ ինքը ափսոս որ գրկուել է գլխիս եկածներին անձամբ վկայ ու ներկայ լինելու բախտից։ Դէ արի դու մի կատաղի, էլի ողորմի հօրը, լաւ էր, որ խաթրս առնելու համար ամուսնու ասածի նման նա էլ «ոչինչ, ոչինչ» ասելով սիրտ տուեց ինձ, որ չամաչեմ ու չը կոտրուեմ, սակայն ինձ ոչինչ օգնել կարող չէր, ոտքից մինչև գլուխս խայտառակուել, պրծել էի։ Բայց երանի՞ թէ բաւ լինէր այդքանը։

Քնելու ժամանակն եկաւ, ընկերոջս տեղը ներսը դցեցին, իսկ իմը դուրսը՝ պատշգամբի թախտի վրայ, ուր իրրև թէ աւելի հով կարող էր լինել և մոծակն ու մղմեղը քիչ։ Իմ կարծիքով ուղիղն այն էր, որ ինձպէս ակամայ վայրենու ապադայ վտանգներից ազատուելու միակ ցանկութիւնն էր ու որոշումը, որով գրկեցին ինձ սենեակում քնեցնելու պատուից ու շնորհքից։ Թէև անիրաւ մոծակներն ու մղմեղները ինձ բոլորովին քքքրեցին ու արիւնս ծծեցին՝ բայց հալալ լինի նրանց. լաւ որ՝ այդպէս եղաւ ու տեղերս դուրսը ձգուեցաւ։ Խուրջինս կանխապէս բերել, դրել էի մօտս, թախտիս տակ։

Լուսնի լուսով նկատեցի, որ ինձ համար ձգած անկողինը շատ փառահեղ էր, մետաքսեայ բարակ անկողին, ձիւնի պէս ջինջ սաւան և նոյնպիսի երկու բարձ՝ իրար վրայ դրուած։ Ով որ տարուան այդ եղանակին Երևան եկել է, մանաւանդ, եթէ նա տեղացի չէ և ցուրտ կլիմայի սովոր՝ նա լաւ կիմանայ, թէ որքան անտանելի բան է գիշերել այդպիսի շոգում։ Շատ անգամ համարեա օդ չես գտնում շնչելու և քիչ է մնում տօթից պատռուիս, աւելցրու դրա վրայ և գլխիս եկած արկածները՝ այն ժամանակ հասկանալի կը լինի իմ դրութիւնը։ Քրտինքը ձեռք չէր վերցնում ինձնից, մտածմունքը մէկ կողմից, ոտներիս անտանելի քորն ու ցաւը միւս կողմից՝ հոգիս հանում էին թէև, բայց և այնպէս պարկելուցս յետոյ շատ չը քաշեց և քունը յաղթեց ինձ։ Կէս գիշերին, չը գիտեմ ժամի քանիսը կը լինէր՝ յանկարծ վեր թռայ կարծես ոտքերիս ցաւից մի քիչ թեթևացած։ Զոյգ ոտքերիս վրայի կապկպած խոցերը, որ արդէն չափազանց ուռել, լցուել ու հասել էին՝ ինքն իրանց բլել և թարախախառն արեան ջրերով ներկել էին մաքուր սաւանը։ Արկածներիս գլուխ գործոցն ու վերջաբանն էր այդ։ Մոլորանքն ինձ առաւ.—ինչ անեմ Տէր Աստուած, խորհեցի ես և երկար չը մտածելով՝ անփէչ կարճ շապիկս հանեցի, որ իմ խելքով՝ սաւանը սրբեմ ու մաքրեմ... կեցցեմ ես ... բարաքեալլա ... լաւ մաքրեցի. թէ որ առաջ չորս հինգ տեղ էր աղտոտուած, այժմ սա-

ւանի կէսը ներկուեց նոյն գեղնակարմիր գոյնով, այդ բաւական չի. աչքս յանկարծ գլխիս տակի բարձին ընկաւ ու տեսայ, որ պակասն էլ նա է լրացրել։ Ձլնքիցս հոսած առատ քրտինքից մաքուր բարձը այնպէս էր իր տակի մետաքսեայ կարմիր կտորից ներկուել, որ կարծես դիտմամբ լինես ներկել տուած։ Արկածներիս թագն ու պսակը տեսնելով՝ մտքիցս հազար ու մի բան անցաւ, թէ այս ինչ տեսակ արարած պիտի կարծեն ինձ այս մարդիկ, տանտիկինն ու իր ամուսինը, երբ որ տեղերս հաւաքելիս՝ ծառաները վերմակը բարձրացնեն ու շնորհքս ցոյց տան։ Ամաչկոտութիւնից էլ ես լեզու պիտի ունենամ արդեօք բացատրելու, թէ ինչ պատճառով է ներկուել սաւանը, կամ եթէ իսկութիւնն էլ ասելու լինիմ՝ պիտի հաւատան արդեօք։ Շատ մտածեցի, շատ ծանը ու թեթև արի ու տեսայ, որ էլ ճար չը կայ, երես չէր մնացել, որ առաւօտեան համարձակուէր տան տիրոջ կամ նորա ամուսնու դէմքը տեսնել, ուստի վճռեցի մի կերպ շնորհքս պակսեցնել, առնել խուրջինս ու փախչել։ Այդպէս էլ արեցի. նայեցի աջ ու ձախ և տեսայ, որ ոչ մի ձայն չէ լսւում, բոլորը քնած են, սուս ու փուս շորերս հագայ, վերմակով ծածկեցի ներկուած բարձն ու սաւանը, խուրջինը ուսս ձգեցի, հայեաթի դրան փայտեայ նիգը զգուշութեամբ բաց արի ու պռկ ... փախի թէ կը փախչես՝ բոբիկ ոտքով դէպի փողոց. էն փախչելն էր, որ փախայ այժմ հանգուցեալ, իսկ այն ժա-

մանակ դեռ կենդանի փեսայիս—Գ.... Զ...-եանի տուն։ Ես փախայ, ազատուեցի, բայց կոշիկներս գերի մնացին այնտեղ, որ ծառան երեկոյեան վերցրել էր սրբելու և որ առաւօտեան բերին տուն։ Այնուհետև էլ չը գիտեմ, առաւօտը տեղերս տեսնելիս բարի տանտիկինը էլի «ոչինչ, ոչինչ» ասաց, թէ ուրիշ բան, գիտեմ միայն հաստատ, որ հանգուցեալ ընկերս իւր ընդհատուած ծիծաղը պիտի բուռն ուժով վերանորոգէր ու ինձ չը գանէր, որովհետև առաւօտեան ժամի 10-ին ես արդէն դէպի Հին Նախիջևան—հայրենիք էի ճանապարհուել։

Մաղթելով, որ Աստուած բոլոր ընթերցողներիս այդպիսի արկածներից ու անսպասելի փորձանքներից ազատ պահի՝ կնքում եմ պատմութիւնս և աւելացնում, որ ամեն անգամ յիշածս տան մօտով անցնելիս կամ դեռ ես ողջ և առողջ բարի տանտիկնոջն ու իր յարգելի ամուսնուն տեսնելիս՝ առանձին մի բաւականութեամբ յիշում եմ թէ տանտիկնոջ «ոչինչ, ոչինչ»-ը, թէ լուսահոգի ընկերոջս քահ քահ կուշտ ծիծաղը և թէ առ հասարակ այդ անցած, գնացած, այժմ զուարճալի քաղցր ժամերը։

ИССКАГО ФОНДА
БИБЛИОТЕКА
ԼՈՒՍԱՀՈԳԻ ԶԱՐՄԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0369000

58725